ՍԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
SASUN HAMBARDZUMYAN

ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ՎԵՐՋԱԾԱՆՑ ՈՒՆԵՑՈՂ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարի նորակազմությունների մի մասը վերջածանցավոր բառեր են:

Դրանք պայմանականորեն ենք համարում հեղինակային նորակազմություն:

Այդ բառերը չենք գտնում Ստ. Մալխասյանցի, ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեղինակային կոլեկտիվի և է. Բ. Աղայանի բացատրական բառարաններում, եթե չհաշվենք այն դեպքերը, երբ դրանցում օրինակներ են բերվում միայն Հովհ. Շիրազի այս կամ այն երկից[1]:

Համեմատել ենք նաև Ս. Ա. Մելքոնյանի կազմած բառացանկի, Ս. Ա. Էլոյանի և Փ. Գ. Մեյթիխանյանի հեղինակած ժամանակակից հայերենի նորաբանությունների բառարանների, ինչպես նաև Ա. Ա. Մարությանի գիտական հոդվածում առանձնացված նոր բառերի հետ[2]:

Հայերենի բառապաշարը հարուստ է ոչ միայն պարզ և բարդ, այլև ածանցավոր բառերով: «Հայոց դանթեականը» պոեմի ածանցավոր բառերի մեջ առանձին խումբ են այն բառերը, որոնք կազմված են ժամանակակից հայերենում բավականին կենսունակ վերջածանցներով:

Ածանցը, ինչպես սահմանում է է. Բ. Աղայանը, երկրորդական բառակազմական ձևույթ է, որով կազմվում է նոր բառ: «Իրենց կազմում ածանց կամ ածանցներ ունեցող համադրական բաղադրությունները կոչվում են *ածանցա-*

---

[1] Տե՛ս *Ստ. Մալխասեանց*, Հայերէն բացատրական բառարան, հհ. I - IV, Երևան, Հայկ. ՍՍՌ պետհրատ., 1944-1945: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հհ. 1-4, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1969-1980: *է. Բ. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976:

[2] Տե՛ս *Ս. Ա. Մելքոնյան*. Հովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), «Բարձրագույն դպրոց» հրատ., Երևան, 1993: *Փ. Գ. Մեյթիխանյան*, Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, «Փյունիկ» հրատ., 1996: *Ս. Ա. Էլոյան*, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 2002: *Ա. Ա. Մարության*, Նորաբանությունները Հ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմում, «Հայոց լեզու և գրականություն», 5-6, 2001, էջ 23-31:

վոր բառեր»[3]: Հայտնի է, որ ածանցավոր բառերը կազմված են լինում մեկ և մեկից ավելի ածանցներով: Ածանցը բաղադրական հիմքին ավելանում է կամ սկզբից, կամ վերջից. առաջին դեպքում ունենում ենք նախածանցավոր, իսկ երկրորդ դեպքում՝ վերջածանցավոր բառ: Հայերենում առհասարակ առավել մեծ թիվ են կազմում վերջածանցավոր բառերը, որովհետև վերջածանցները քանակապես ավելի շատ են, քան նախածանցները[4]:

Վերջածանցումը տեղի է ունենում բաղադրվող հիմքին որևէ վերջածանցի հավելումով: Այս դեպքում նույնպես ածանցները միանում են պարզ կամ բաղադրյալ (բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր) հիմքերին[5]: Ժամանակակից հայերենում վերջածանցը սովորաբար բնութագրվում է հետևյալ կերպ. «Վերջածանց է կոչվում այն բառակազմական երկրորդական ձևույթը, որը կցվելով բառի (հիմքի, նախատիպի) վերջից և նրան նոր իմաստ կամ իմաստային նրբություն տալով՝ կազմում է նոր բառ»[6]:

Վերջածանցմամբ կազմվում են գոյականներ, ածականներ, թվականներ, մակբայներ: «Գոյականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք դրվելով տարբեր հիմքերի վրա՝ կազմում են գոյական անուններ»[7]: Այնուհետև, Լ. Ս. Հովսեփյանը գտնում է, որ «վերջածանցները անհնարին է ենթարկել այնպիսի հստակ խմբավորման, ինչպես նախածանցները: Կարելի է առանձնացնել միայն ածանցների գործառական խմբեր՝ այս կամ այն խոսքի մասը կերտելուն նրանց գործառույթի համաձայն (գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլն): Իմաստային տեսակետից նրանք խայտաբղետ պատկեր են ներկայացնում»[8]:

«Հայոց դանթեականը» պոեմում կան շուրջ մեկուկես տասնյակ գոյականակերտ վերջածանցով կազմված մեկ հարյուրյակից ավելի բառեր:

---

[3] *Է. Բ. Աղայան*, Բառագիտություն. *Գ. Բ. Ջահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ս. Քոսյան*, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ (Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն). Երևան, «Լույս» հրատ., 1980, էջ 443:

[4] *Է. Բ. Աղայան*, նշվ. աշխ., էջ 446: Հմմտ. *Լ. Ս. Հովսեփյան*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

[5] Թե հին և թե նոր գրական հայերենի ածանցների և ածանցման մասին մանրամասն տե՛ս *Մ. Աբեղյան*, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատ., 1965, էջ 222-282: *Ս. Ա. Էլոյան*, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Հայկ ՍՍՌ ԳԱ հրատ., 1963: *Ս. Ա. Գալստյան*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալս. հրատ., 1978, էջ 48-188: *Ա. Մ. Սուքիասյան*, ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1982, էջ 318-363: *Լ.Ս.Հովսեփյան*, նշվ. աշխ., 187-287:

[6] *Ա.Սուքիասյան*, նշվ. աշխ., էջ 340:

[7] *Ա.Սուքիասյան*, նշվ. աշխ., էջ 327:

[8] *Լ.Ս.Հովսեփյան*, նշվ. աշխ., էջ 187:

Այդ վերջածանցներն են՝ *-անք, ացի, -ենի, -իչ, -իկ, -մունք, -ոց, -ություն, -ուկ, -ուհի, -ում, -ունք, -ստան, -ք*:

Ստորև առանձին-առանձին անդրադառնում ենք «Հայոց դանթեական» պոեմում գործածված այն բառերին, որոնք իրենց կազմում ունեն հիշալ ածանցներից մեկնումեկը: Դրանք ներկայացնում ենք նկարագրական և վիճակագրական քննությամբ:

1. *-Անք* վերջածանց ունեցող կազմությունները մեկ տասնյակից փոքրինչ ավելին են, սովորաբար բաղադրված են լինում պարզ հիմքի հետ՝ բացառությամբ մեկ-երկուսի: Ընդ որում ածանցը դրվում է երկու կարգի հիմքի վրա՝ գոյական կամ բայարմատ:

ա)Գոյականական հիմքով բաղադրվածներ, այսինքն՝ *պատիժ, վերջերգ* հիմքերով՝ *պատժանք* («պատիժ. պատժելը»), *վերջերգանք* («վերջերգ. ավարտ, երգերից վերջինը»):

Օրինակ՝ «Ո՛վ դուք՝ վկաներ հավերժավրեժ հայոց եղեռնի, / Զարթե՛ք, որ *պատժանքն* այս անգույդ մեղքի կոկորդից բռնի» (7)[9]: «Այն էլ գենոցիդն այս դժոխաքեն, / Աստված էլ, գուցե, նորից կբացի / *Պատժանքի* գալիք սուրբ դուռն ապաքեն» (135): «*Վերջերգանք*» («վերջերգ. ավարտ, երգերից վերջինը». վերնագիր. 334):

բ) Բայական (բայարմատ) հիմքով բաղադրվածներ, ըստ որում *ապշ(ել)-շշմ(ել), գուռնագռ(ալ), ընկրկ(ել), խարա(նել), ննջ(ել). նշավակ(ել), շշնջ(ալ), պեղ(ել), ցեղասպան(ել)* բաղադրվող հիմքերով՝ *ապշանք-շշմանք* («խոր հիասքափություն. ապուշ կտրելը»), *գուռնագռանք* («գուռնայի տհաճ ձայն. գռոց)», *ընկրկանք* («նահանջ. տեղի տալը, հետ կանգնելը»), *խարանք* («այրուք, այրվածք. (փխբ.) անարգանք, մեղադրանք»), *ննջանք* («նինջ, քուն. (փխբ.) անտարբերություն»), *նշավանք* («հանդիմանանք, նշավակում»), *շշնջանք* («շշնջոց, շշնջյուն»), *պեղանք* («պեղված բաներ. պեղվածք»), *ցեղա(ը)սպանք* («ցեղը սպանելը»):

Օրինակ՝ «Վանա վարդերես մերկամոլորիկ Վարդուհի դառած՝ / *Ապշանք-շշմանքի* փշերը լարած...» (217): «Թմբուկների տակ գինավառ գորքի, / Զարախինդ գոչով *գուռնագռանքի*» (293)[10]: «Մի աչքը լիքն էր Աստծո գութով, / Աստվածագոհի՝ Վարդանով իմ քաջ,/ Մյուսն՝ *ընկրկանքն* այս հիսուսահառաչ» (71): «*Խարանքի* գիշեր» (վերնագիր. 149): «Ես նզովում եմ

---

[9] Բնագրային օրինակները վերցված են՝ *Հովհաննես Շիրազ*, Հայոց դանթեականը. Հայ կոտորածների հավերժասուգին» (Երևան, «Նաիրի» հրատ, 1991) գրքից՝ կից նշելով միայն համապատասխան էջը:

[10] Ունենք նաև այս հիմքից *-ոց* վերջածանցով *գուռնագռոց* կազմությունը (տե՛ս ստորև):

ննջանքն իմ հունաց, / Որ Աքիլլեսիս սուրն է պատյանել... / Այդ հին ցավից են մագերս ծյունել» (258): «Թուրքահողմ ձեռով երկնքին նետված՝ /Որպես *նշավանք* քեզ, ո՛վ հայ Աստված» (208): «Եվ աչքերի մեջ քնքուշ մի ապշանք.../Շրթունքն էր շարժում՝ ինչպես *շշնջանք»* (195): «Վեր էր խոյանում աստղադիտարանն Ակնա լճափին, / Վկան են՝ *պեղանք*, ու վկա՝ արփին» (121) և այլն:

2. *-Ացի* վերջածանց ունեցող կազմություն է *արևմտացի* («արևմուտքցի. արևմտյան եվրոպացի») բառը՝ *արևմուտք* բաղադրվող հիմքով:

Օրինակ՝ «Որոնց ընդհանուր մակարդակը *արևմտացիներու* հետ բաղդատմամբ շա՛տ, շա՛տ ցածր է» (107):

3. *-ենի* վերջածանց ունեցող կազմություն է *ռոմակենի* («ռոմակի՝ գիշատիչների խմբի անդամ»)՝ *ռոմակ* գոյականական բաղադրվող հիմքով: Օրինակ՝ «Այս խոստովանեք, ո՛վ *ռոմակենիք*, / Թե ոնց խլեցիք երկիրն իմ դրախտ» (112):

4. *-Իչ* վերջածանց ունեցող կազմություն է *խավարիչ* («խավար բերող՝ սփռող») բառը՝ *խավար* ածականական բաղադրվող հիմքով:

Օրինակ՝ «Եվ բանաստեղծն էլ՝ ողբն հայրենիքի՝ / Եղեռնի ընդդեմ մտորում է խոր,/ Թե արդյոք նենգող *խավարիչը* չէ՞ր, / Որ հաշմեց հայոց զորքին հեթանոս.- / Դու՞ք պատասխանեք, ո՛վ խաբված խաչեր» (71):

5. *-Իկ* վերջածանց ունեցող բառերը համեմատաբար շատ են, և բացառությամբ մեկ-երկուսի՝ բաղադրված են լինում գոյականական սերող հիմքով:

Ըստ այդմ՝ առանձնանում է երկու խումբ:

ա) Գոյականական հիմքով կազմված բառեր, ըստ որում *դաշտ, դպրոց, զորք, լուսաստղ, Հայաստան, մատուռ, սանրագլուխ* («սանրի նման՝ սանր հիշեցնող փետուրներով փոքր գլուխ»), *ցեղ* («ազգ. հանրություն») բաղադրվող հիմքերով՝ *դաշտիկ* («փոքր դաշտ»), *դպրոցիկ* («փոքր՝ սակավ աշակերտ ունեցող դպրոց»), *զորքիկ* («փոքր՝ սակավաթիվ զորք»), *լուսաստղիկ* («լուսե աստղ. լուսաստղ»), *Հայաստանիկ* («փոքր Հայաստան. մնացած մաս Հայաստանի»), *մատուռիկ* («փոքր մատուռ»), *սանրագլխիկ* («սանրի նման՝ սանր հիշեցնող փետուրներով փոքր գլուխ»), *ցեղիկ* (հեգն.) «փոքր, չնչին ցեղ»):

Օրինակ՝ «Այս իմ ողբերգածն ուրիշ է, ուրիշ, / Մինչ քոնը թղթե *դաշտիկ* է թավիշ...» (227): «Չորս հարյուր մանուկ՝ *դպրոցիկ* մի սուրբ, / Կենդանի թաղված չորս հարյուր հայեր...» (195): «Խոսում էր սուրն հայ *զորքիկի*, / Շաչում էր թուրն Անդրանիկի» (305): «Անմեղ էր, ինչպես

լուսատոիկս պերճ, / Որ խարխափում էր խոր խավարիդ մեջ...» (156): «Նոր *Հայաստանիկն* այս իմ փրկված, / Այս գետակն՝ իր մայր ծովից գրկված» (251): «Քանզի իմ ներկան՝ այր մի հուսահատ, / *Հայաստանիկս* վրեժն է կիսատ...» (277): «Մի հուսաձառս՝ գրկված իր մի ողջ անհույս անտառից, / *Մատուռիկս՝* իր բյուրագմբեթ մայրատաճարից» (251-252): «Արծվի ձագերը՝ արծվաթխլիկով, / Կկվի ձագերը *սանրագլխիկով»* (167): «Արծվի ձագերը անգութ մեծացել, / *Սանրագլխիկն* էր կկվից մնացել» (168): «Ապշում էր մեզ հետ լուսինն էլ նամետ, / Որ ազգ է թաղում *ցեղիկ* մի ահմեդ...» (299):

բ) Ածականական հիմքով կազմված բառեր, ըստ որում *աղավնակերպ, աշխարհապաշտ, արծվաթուխ* բաղադրվող հիմքերով՝ *աղավնակերպիկ* («աղավնու նման հեզ ու լուռ՝ նրբին. աղավնաբարո»), *աշխարհապաշտիկ* («աշխարհը պաշտող. աշխարհի նկատմամբ պաշտելի վերաբերմունք ունեցող»), *արծվաթխլիկ* («արծվի պես ուժեղ և թուխ՝ մուգ սև գույնի»)[11]:

Օրինակ՝ «Նորեն հայտնվեց *աղավնակերպիկ՝* / Այս անգամ հույսով ժպտաց մտերմիկ» (56): *«Աշխարհապաշտիկ* մի ողջ մեծ ազգիկ՝ մի անմեղ երկիր, / Ո՞ւր ես, անաստված, թե կաս, գոնե դու, Աստված իմ, փրկի՞ր...» (84): «Արծվի ձագերը՝ *արծվաթխլիկով.*/Կկվի ձագերը՝ սանրագլխիկով (167):

գ) Բայական (կամ բայարմատ) հիմքով կազմված բառեր, ըստ որում *հավերժավառ* («մշտավառ, հավերժ լուսատու»), *մահաքարջ* («մահվան բուն՝ խորշ») բաղադրվող հիմքերով՝ *հավերժավառիկ* («մշտավառ, հավերժ լուսատու»), *մահաքարջիկ* («մահվան բուն՝ խորշ»):

Օրինակ՝ «Եվ ահա երբ որ գիշերվա աչքը խավարը կոխեց, / Լուսինն Աստծո *հավերժավառիկ* կանթեղը կախեց» (17): «Կպրե կարասն է *հավերժավառիկ* ուր մեղքն այրվեր՝ / Յոթնապոռնկաց տանջարանը մեծ» (204): «-Ո՛վ քարայր,-ասի,- ո՛վ *մահաքարջիկ,* /Տասներկու հազար կույս մանչ ու աղջիկ...»(51): «Չլինի՞ դու ես, ո՛վ *մահաքարջիկ,* / Աշունել իմ սերն, ո՛վ դու անզգամ» (172) և այլն:

6 *-Մունք* վերջածանց ունեցող կազմություն է *ազատմունք* («ազատում, ազատություն») բառը, որը գրաբարյան *ազատումն* բառի հոգնակին է, իսկ ժամանակակից հայերենում դիտվում է իբրև *-մունք* ածանցով բաղադրություն. ըստ Ա.Սուքիասյանի՝ «առաջացել է գրաբարի *ումն* ածանցով կազմված բաղադրությունների հոգնակի ուղղական՝ *մունք* ձևից: Բայական հիմքից կազմում է գոյականներ՝ անեզական, ընդհանրական, վերացական

---

[11] *Արծվաթխլիկ* բառը կարելի է դիտել նաև *արծվա-(թխ-լ-իկ)* կաղապարով բաղադրություն:

ընդհանուր նշանակությամբ, ցույց է տալիս կատարված որևէ բան կամ գործողության անուն»[12]:

Օրինակ՝ «Եվ ծորն իջավ Անդրանիկը՝ / Հայ *ազատմանց* հույսով լիքը» (323):

7. *-Ոց* վերջածանց ունեցող կազմություն է *զուռնազոց* («զուռնայի տեսակ ձայն՝ զռոց») բառը, որն, ի դեպ, ժողովրդախոսակցական լեզվից է առնված և բանաստեղծական խոսքի մեջ գործածված:

Օրինակ՝ «Ալեկոծ սուգի հեծեծանքն էին թմբուկով խեղդում, / *Զուռնազռոցով* հայ վշտի վրա միմոսախնդում...» (292):

8. *-Ություն* վերջածանցով կազմություններն այս դեպքում, որքան էլ տարօրինակ կարող է լինել, քիչ են հանդիպում: Ունենք *կես-հայություն* («հայության մի մասը՝ կեսը»), *շղթայվածություն* («շղթայված՝ կաշկանդված լինելը»), *պղծալռություն* («պիղծ՝ ստոր լռություն, լռելը») բառերը: Օրինակ՝ «Հայության մի մասը՝ կեսը: Մորթվելու տարվող մի *կես-հայություն*,- Հարսներ՝ մազերը մեկից դառած ծյուն» (293): «Կամքիդ *շղթայվածության* մեջ էլ երգ ես սիրում, քանզի միայն չարը երգ չունի» (46): «Մի՞թե դու պիտի ապերախտությամբ անառակացյալ / Թազբեհի նման չքաշես հավերժ՝ այս օրերն անցյալ, / *Պղծալռության* պատյա՞նը դնես սուրը վրեժիդ» (275):

9. *-Ուկ* վերջածանց ունեցող կազմությունները երկու դեպքում բարդ, իսկ երկուսում պարզ ածանցավոր բառեր են՝ բաղադրված *գայլամարդ, շնամարդ* և *հայ, մազ* բաղադրվող հիմքերով՝ *գայլամարդուկ* («գայլի վարք ունեցող մարդ, տմարդի»), *հայուկ* («փոքր՝ չնչին հայ»), *մազուկ* («չնչին՝ աննշան մազ»), *շնամարդուկ* («շան վարք ունեցող մարդ, տմարդի»):

Օրինակ՝ «Այս ո՞ւր ես հասնում, ո՛վ *գայլամարդուկ*.../ Տեսավ այս ամենն Անդրանիկն հայդուկ» (179): «*Հայուկն* ո՞վ է, որ ոսկի թաքցնի՝ / Հա՛ն...Վանա ոսկիդ ոսկի կծնի...» (284): «Մի շան *մազուկն* էլ բարձր է մարդ-գայլից...» (201), «-Էնվեր փաշա, *շնամարդուկ*, / Այս ո՞ւմ ազգին սուր ես տանում, / Չքվի՛ր... դեռ կա հայը հայդուկ...» (304):

10. *-Ուհի* վերջածանցով կազմություններն այստեղ համեմատաբար շատ են՝ սերված *Աֆրիկա, բաքի, հյուսիս, չին, սուլթան, Վիրք* բաղադրվող հիմքերից՝ *աֆրիկուհի* («Աֆրիկայի բնակչուհի, կին աֆրիկացի»), *բաքուհի* («թրքուհի, կին թուրք»), *հյուսիսուհի* («հյուսիսի կին բնակիչ, հյուսիսցի կին»), *չինուհի* («Չինաստանի բնակչուհի, կին չինացի»), *սուլթանուհի* («սուլթանի կին, կին-սուլթան»), *վիրուհի* («Վրացուհի, կին վրացի»), ընդ որում որոշ դեպ-

---

[12] *Ա.Սուքիասյան,* նշվ. աշխ., էջ 354-355:

քերում տեղի է ունեցել հիմքի՝ հայերենին բնորոշ փոփոխություն. ինչպես՝ *Աֆրիկա* և *Վիրք* «Վրաստան» տեղանուններից՝ *աֆրիկ-, վիր-* փոփոխված-ները:

Օրինակ՝«Ո՛վ *աֆրիկուհիք*, դո՞ւք էլ եք անհոգ» (155): «-Սորթել որդուն էլ այս քած քաջուհու... / Սրանք չեն դառնա քուլրը...*բաջուհու*» (100): «Ո՛վ *հյուսիսուհիք*, լսեցի՞ք արդյոք.../ Ինչո՞ւ թողեցիք իմ ազգին անօգ» (155): «Ո՛վ հարավուհիք, ո՛վ *հյուսիսուհիք*, / Գոնե անեծքի շուրթով խոսեիք» (156): «*Չինուհի՛ք*, հայ ցավն զգացի՞ք արդյոք, / «Հայաստանն առանց հայի կթողնի / Սև *սուլթանուհին* գերման անկողնի...» (126): «Եվ Հայաստանում էլ հայ չի թողնի / Սև *սուլթանուհիդ* գերման անկողնի» (162): «*Վիրուհիք*, ո՞ւր էր գութը ձեր բազկի» (155):

11. *-ում* վերջածանց ունեցող գոյականները կազմված են *ազգաջնջ(ել)* «ազգին պատուհասել՝ ջնջել-վերացնել, ոչնչացնել. ազգը կործանել», *ինքնապատժ(ել)* «ինքն իրեն պատժել», *հայաջնջ(ել)* «հայերի կոտորել», *մեղսաթաղ(ել)* «մեղավոր՝ անհիրավ ձևով ոչնչացնել», *ոճրագայլ* «գիշատիչ՝ գայլային արարք՝ ոճիր» բայական կամ գոյականական բաղադրական հիմքերով:

Օրինակ՝ «Քարացած վշտով՝ *ազգաջնջումի* այս դժոխատեսլ. / Խաչակնքում էր շանք ու կայծակով երկինքն ահառած» (212): «*Ինքնապատժումով*, որ հայ ես ծնել / Եվ դեռ կուզեիր արծրվացնել» (99): «*Հայաջնջումի* այս վճիռն անզուլգ՝ /Սև յաթաղանի բերանով անսուտ» (193): «Վիրուհիք, ո՞ւր էր գութը ձեր բազկի, / Ո՛վ իսպանուհիք, լսեցի՞ք դուք էլ / *Մեղսաթաղումը* իմ անմեղ ազգի» (155): «Ես վաղվա ծնած խիղճ ու դարերի դատին եմ հանձնում / *Ոճրագայլումներն* այս իմ մատյանած./ Ոճրատեսիլներն այս իմ վկայված...» (259):

12. *-ունք* վերջածանցով ունենք *ազգամասունք* «ժողովրդի՝ ազգի՝ ժողովրդի մի մասը, կոտորածից մնացած հատված(ներ)ը», *աստեղաբարձունք* «անսահման բարձր. աստղերի բարձունք», *արծվաբարձունք* «արծվային՝ արծվին մատչելի բարձունք. (փխբ.) վերին ոլորտ», *դժոխքաշրթունք* «դաժան՝ չար բերան», *ժայռաշրթունք* (փխբ.) «ժայռի պռունկ՝ անշարժ, անխոս, անտարբեր», *մեղսամասունք* «մեղքի բաժին՝ մաս», *մոխրաշրթունք* «մոխրապատ շուրթեր՝ շրթունք», *մոռացունք* «մոռացող. մոռացում՝ մոռանալ տվողներ», *ոսկեմասունք* «ոսկյա՝ թանկ մասունք» կազմությունները. որոնց *մասունք, շրթունք* և *բարձունք* բաղադրիչները գրաբարյան *մասն, շուրթն* և *բարձր* գոյականների հոգնակիի ձևեր են, և որոնք ժամանակակից հայերե-

նում որպես այդպիսին մթագնել են և դիտվում են իբրև *-ունք* (նաև *մոռացունք*-ի դեպքում) վերջածանց[13]: Այսպես, Ա.Սուքիասյանը այս ածանցի մասին գրում է. «կազմում է գոյականներ՝ հավաքական նշանակությամբ, ծագել է գրաբարի *-ն* վերջացող բառերի հոգնակի ուղղականի վերջավորությունից»[14]:

Օրինակ՝ «Դուք չսգացիք զեթ հիսունամյա եղեռնասուգով,- / Լոկ հայը սգաց հազիվ փրկված *ազգամասունքով*» (259): «Նա, որի սիրտը ամուլ արգանդն է ու ոչ թե արցունք, / Ում աչքին հայոց գանգաբլուրն է *աստեղաբարձունք*» (248): «Մանուկ Հիսուսիդ արցունքն անարցունք, / Ո՞ւր ես, փլեկած մեր *արծվաբարձունք*» (89): «Դու էլ, Անգլիա, ո՛վ արծվաբուեր, /Նշավակում եմ *դժոխքաշրթունք* ձեր լռությունը» (272): «-Սգա՛. Հայաստա՛ն, այս *ժայռաշրթունք* աշխարհը վկա՝ / Քո հին եղեռնը նոր շրթունքով էլ սգացող չկա» (43): «Եվ կկործանե աշխարհն այս անսուգ. /Աշխարհ, որ ծով է մի *մեղսամասունք*» (277): «Ու *մոխրաշրթունք* նզովում էին / Ալթայից խուժած սելջուկի ճամփան» (96), «Ուրեմն բալասան չես այժմ, ո՛վ *մոռացունք*, վեր կացեք» (30). «Ու մերկացրին յոթնամատանի հարսնանց գեղեցիկ, / Ինչպես վանքերը կամ *ոսկեմասունք* սուրբ եկեղեցիք» (283):

13. *-Ստան* վերջածանց ունեցող կազմություն է *ամայստան* «ամայի՝ անմարդաբնակ տեղ, մարդաթափ վայր» բառը:

Օրինակ՝ «Որ տակովն արավ ճիշտ երկու միլիոն հայոց գերդաստան, / Ողջ Հայաստանը դարձավ գանգալուռ մի *ամայստան*» (128):

14. *-Ք* հոգնակերտ վերջածանցով կազմություն է *ցեղարսպան(ք)* «ցեղին ոչնչացնող՝ սպանող», «ցեղի սպանություն. ցեղ սպանելն՝ իբրև երևույթ» բառը՝ կազմված *չարագործ՝ եղեռնագործ* կամ *ցեղասպանություն* բառերի իմաստով[15]:

Օրինակ՝ «Լոխմանու աչքից վերքը թաքցընողն անբույժ կմնա, / *Ցեղարսպանի* ճամփեն չքանողը՝ հազար կբանա...» (40): «Վա՛յ ձեզ, վա՛յս ձեզ, ո՛վ *ցեղարսպան* նով մեղսակերներ» (72): «Նույնիսկ մատներն էր նա վիատ շարժում, / *Ցեղարսպանի* նենգ մահն էր հուշում» (86): «Թե՝ ո՛վ *ցեղասպան* բառն աշխարհ բերավ, / Ովքե՛ր լռեցին ու լռում են դեռ» (123): «Թե դու Աստված ես ամենակարող, / Թե կարողը չես հայոց պատանքի, / Ինչո՞ւ չես կտրում դժոխքն արարող / Բոլոր բազուկներն *ցեղարսպանքի*» (241). «Որ մենակ թողեց, ինքն էլ մենակվեց / Բռնության առաջ *ցեղարսպանի* (258) և այլն:

---

[13] Ստ Մալխասյանցի բառարանն ունի *մոռացունք.*,
[14] Տես *Ա. Ս. Սուքիասյան*, նշվ. աշխ., էջ 361-362: Հմմտ. *Լ.Ս.Հովսեփյան*, նշվ. աշխ.:
[15] Բնագրում այս բառը մշտապես գործածված է *ը*-ով՝ *ցեղարսպան(ը)*

Այստեղ ունենք նաև այնպիսի բառեր, որոնց երկրորդ՝ *ք*-ով ածանցված մասն, իբրև առանձին բաղադրիչ, միանում է բարդության սերող հիմքին: Նման կազմության բառերը բավականին շատ են, ուստի բերում ենք հետևյալ ներքին խմբավորմամբ:

ա) Բառեր, որոնց բաղադրվող հիմքն է *դժոխք* բաղադրիչը՝ *դանքեա-դժոխք* («Դանքեի պատկերած՝ դանքեական դժոխք»), *եղեռնադժոխք* («եղեռնի՝ ոճրի հետևանք, դժոխք»), *հազարադժոխք* («հազարապատիկ՝ անասելի դժոխք»), *մեղսադժոխք* («մեղքերի դժոխք հիշեցնող»), *միֆ-դժոխք* («անասելի՝ առասպելական դժոխք»), *մոխրադժոխք* («մոխրի դժոխք. մոխիր դարձած դժոխք»), *յոթնադժոխք* («յոթնապատիկ դժոխք. դժոխքի յոթ պարունակներ»), *ոճրադժոխք* («ոճրի դժոխք, գեհեն»):

Օրինակ՝«Հոգեհանգիստ էր զոհերին կարդում /*Դանքեադժոխք* մեր ողջ ճամփեքին» (49): «*Եղեռնադժոխք* անդունդին հասանք» (48): «Փրկելով աշխարհն այս *մեղսադժոխք*. / Որ մեզ ջնջում է այսքան անողոք» (102): «Ու տեսանք դեռ տաք *մոխրադժոխքից* / Այրված, կիսայրված գրքեր դուրս բերեց» (94): «Թե այս էլ տեսնես՝ ինչ պիտի տեսնենք, / Երբ *յոթնադժոխք* Դեր Զորներն հասանք» (16): «Դեռ ցույց եմ տալու, ցույց են տալու դեռ / Այս *ոճրադժոխքն*՝ անեծքով անմեռ» () և այլն:

բ) Բառեր, որոնց բաղադրվող հիմքն է *զորք* բաղադրիչը՝ *բյուրազորք* («մեծաթիվ՝ բազմահազար զորք ունեցող»), *էնվերազորք* («էնվերի՝ թուրքական զորք»), *թուրքազորք* («թուրքի զորք. (փխբ.) ասպատակող և կոտորող»), *ոգեզորք* («ոգու՝ ոգեղեն զորք»), *տիգրանազորք* («Տիգրան Մեծի զորք. (փխբ.) արքայական՝ հաղթող զորք»):

Օրինակ՝ «Քանզի երբ հայոց ազգն էր գլխատվում՝ /Յաթաղան կացնով *բյուրազորք* դահճի՝/ Դու լեզուն պոկած զանգ էիր թվում» (231): «Մի հոտ՝ ետևից հովվի տեղ՝ զորքեր, *(էնվերազորքեր՝* գերմանազրահ...)» (293): «-Ինչո՞ւ կանգնեցիր,- գոռաց ետևից *թուրքազորք* հորդան» (296): «Ուրվացյալն՝ հեծած ուրվանժույգին, / Վահան դառնալով մեր *ոգեզորքին»* (57) և այլն:

գ) Բառեր, որոնց բաղադրվող հիմքն է *դեմք* բաղադրիչը՝ *ուրվադեմք* («նոսր՝ թույլ դեմք. ուրվապատկեր»), *քանդակադեմք* («քանդակված դեմք. դիմաքանդակ»):

Օրինակ՝ «Բերանգոց լռանքն այս ալևորված, / Որ *ուրվադեմքն* է մարդկության նորված» (231): «Կացնաքերել էն պարիսպդ էլ վեհ, / *Քանդակադեմքն* էլ քո առյուծաբաշ» (229) և այլն[16]:

դ) Բառեր, որոնց բաղադրվող հիմքն են իմացական ոլորտ նշանակող *գիրք, խելք, խոսք, միտք* բառերը՝ *գոջախելք* («վերջում գոջացող՝ փոշմանող»), *մոխրամիտք* («մոխիր դարձած՝ մոխրաշաղ միտք»), *ողբագիրք* («ողբի՝ ափսոսոանքի, ցավի գիրք»), *պղծախոսք* («պիղծ՝ անհարիր, անվայել խոսքեր»):

Օրինակ՝ «Ինչպես ինքն Աստված, ինչպես մսուրքը.- / Թող այս էլ կարդա *գոջախելք* թուրքը...» (147): «Լուռ *մոխրամիտքը*՝ անթեղ էր սրտում, / Ուրվականի պես կայծակեց տրտում» (248): «Քանի հույսս չեք, ո՛վ մարդաբծեր, / Այս *ողբագիրքս* դասագիրքն է ծեր» (325): «Քարվան առ քարվան բերում ու բերում, բերում՝ հսկելով, / Հայոց Աստծուն անգուսպ հայհոյող *պղծախոսքերով*» (293) և այլն:

ե) Բառեր, որոնց բաղադրվող հիմքն են մարմնի մաս, վերջինիս ֆիզիկապես և հոգեպես վերաբերող *կյանք, կուրծք, ծեռք, մեղք, ոտք, վերք* բառերը՝ *դահճածեռք* («դահճի՝ մարդասպանի ծեռք»), *դառնակյանք* («դառը՝ դժվարին կյանքով աչքի ընկնող»), *թրամեղք* («թրի՝ սրի պատճառած մեղք՝ նեղություն»), *հազարավերք* («հազարավոր՝ մեծաթիվ վերքեր ունեցող»), *ձիաոտք* («ձիու ոտք»), *մայրակուրծք* («մայրական սնուցիչ՝ կերակրելու առատ աղբյուր») և այլն:

Օրինակ՝ «Խուժեց փարախներն հայոց *դառնակյանք*, / Խուժեց, խժռեց ծերին ու մանկան» (14): «Ու *դահճածեռքով* նախճիրն ու ոճիրն հորդեցին ձորում, / Ցայտեց արյունը... թվաց լուսնից էլ արյուն է ծորում...» (298): «Ազգ որ չի գործել ոչ մի *թրամեղք* երկրում բազմամեղ... / Իր Արարատի սուրբ կանթեղի պես՝ հավիտյան անմեղ» (118): «Տեսնելով զոհերն այս *հազարավերք*, / Ողջ Արևմտյան Հայաստանով մեկ» (280): «*Ձիաոտքերը* թաղիքված էին, որ ձայն չհանեն, / Որ հայ վանքերից թալանված ոսկիք ապահով տանեն (282): «Որ հայտնելով *մայրակուրծք* մի գետ՝ / Գիրկն առավ իսկույն մանուկ գետակին» (72) և այլն:

զ) Բառեր, որոնցում որպես բաղադրվող հիմք են հանդես գալիս *երկինք, հոսք, շարք, վանք* բառերը՝ *արնահոսք* («արյան հոսք՝ հոսելը. արնահոսություն»), *դժոխաշարք* («դժոխային՝ դաժանության պատրաստ շարք՝

---

[16] Ս. Ա. Սելքոնյանի բառացանկում (էջ 170) բերվում է *քանդադեմք* ձևով:

խմբվածություն»), *յոթերկինք* («ամենավերին, յոթ երկինք այն կողմ»), *սրբավանք* («սրբատեղի՝ վանք, սրբավայր»):

Օրինակ՝ «Երբ ի գին թափվող մեր *արնահոսքին* / Ողջ Հայաստանի արծաթն ու ոսկին / Դեպի եվրոպդ վար քարավանվեն» (199): «Իսկ ծորի վերև՝ *դժոխաշարքով* ասկյարները, տե՛ս, / Հրացանները լցրած կանգնեցին սև ամպերի պես» (300): «Ու կմոնչան *յոթերկինքն* ի վեր, / -Ո՛վ ցավերի ծով ծնած պիղծ դավեր» (21): «Ո՛վ Նիագարա, քո հորձանքի մեջ / Տակվդ արե՞լ ես սրբավանք մի պերճ» (90) և այլն:

Վերը բերված գոյականակերտ վերջածանց ունեցող նորակազմ բառերի մոտ մեկուկես տասնյակ խմբերից մի քանիսը ներկայանում է մեկական օրինակով: Այդպիսին են 2, 3, 4, 6, 7, 13, 14 խմբով, այսինքն՝ *-ացի, -ենի, -իչ,-ոց, -մունք, -ստան, -ք* վերջածանցով բաղադրված բառերը: Մնացածը երկու և ավելի օրինակով փաստարկվող կազմությունների խմբեր են:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք վերը կատարված վերլուծությունը, ապա կարելի է, իբրև եզրակացություն, նշել հետևյալը: «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի մեջ, իրենց հերթին, առանձին հետաքրքրություն են ներկայացնում գոյականակերտ վերջածանց ունեցող բառերը, և իբրև բառապաշարի առանձին խումբ, հեղինակի խոսքի դրսևորման յուրահատուկ միջոցներից մեկն են: Դրանք ստեղծված են ինքնատիպ մտածողության ակունքներում, խոսքի ոճավորման ինքնաբուխ պայմաններում, ուստի հարստացնում են բանաստեղծի, այլև առհասարակ ժամանակակից հայերենի բառապաշարը:

Newly formed words with noun-forming affixes in the "Armenian Danteida" poem after Hovhannes Shiraz

In the "Armenian Danteida" poem after Hovhannes Shiraz besides other affixation types, we can find also words with noun-forming affixes.

There are more than hundreds of neologizms with following affixes: *-անք* -ank^{c} (*ապշանք ապվանk^{f}* "struck dumb; stupefied"), *-ացի ac^{c}i* (*արևմտացի arewmtac^{c}i* "European"), *-ենի -eni* (*ոհմակենի ohmakeni* "member of a pack"), *-իչ -i$\cdot$f* (*խավարիչ xawari$\cdot$f* "darkener"), *-իկ -ik (դաշտիկ daštik* "a small field") *-մունք –munk^{f}* (*ազատմունք* azatmunk^{c} "freedom, rescue"), *-ոց -oc^{c}* (*զուռնազոց* zuynazloc^{c} "bray, bellowing of zourna – oriental wind instrument"), *-ություն –uf$\cdot$yun* (*պղծալություն pՁcallyuf$\cdot$yun* "mean, foul silence"), *-ուկ –uk* (*գայլամարդուկ gaylamarduk* "man with life of wolf"), *-ուհի* (*աֆրիկուհի* "African (woman)"), *-ում* (*մեղսաթաղում meՁsaf^{c}aՁum* (literally) "apostasy, denial of sin"), *-ունք -unk^{f}* (*ազգամասունք azgamasunk^{f}* "a part of people, nation"), *-ստան -stan* (*ամայստան amaystan* "uninhabited place, site"), *-ք -k^{f}* (*ցեղասպանք c^{f}eՁaspank^{f}* "massacre; genocide"), etc.

In the article we give lexical-semantic analyses in separate groups.